

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԱՆ ՈՐՈՇ ՅՈՒՐԱՀԱՏԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անահիտ Ջիջյան

*փիլիսոփայական գիտությունների թեկնածու
Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի
Սոցիոլոգիայի և սոց. աշխատանքի ամբիոն*

Սոցիալական աշխատանքի ծագումը և բազմաբնույթ ծավալումը, ըստ էության, պատասխանն է մարդկանց՝ անձանց, խմբերի, և՛ առանձնացող կյանքում, և՛ համակեցության մեջ շեշտված **կարիքի**, որը և ակնառու է դարձել հատկապես փոխակերպվող հասարակության ժամանակաշրջանում, երբ էականորեն նշանակալի «փոփոխություններ» են իրականանում քաղաքական, սոցիալական, տնտեսական, արժեքային, կրթական, աշխատանքային և այլ ոլորտներում: Սոցիալական աշխատանքն ուղղված է խոցելի կամ արդեն վտանգված՝ սոցիալական կյանքից տարանջատված անձանց, խմբերի, համակեցության կարիքային հիմնախնդիրների լուծմանն աջակցությանը և հասարակական կյանքում նրանց վերստին ներգրավմանը:

Ժամանակակից աշխարհում «սոցիալական աշխատանք» ամբողջական ու մեկ-միասնական ֆենոմենի ներկայությունը բնութագրելի է որպես գիտակարգի, մասնագիտական գործունեության և ուսուցակարգի եռամիասնություն: Մասնագիտական գրականության մեջ բոլոր այն աշխատություններում, որոնցում հետազոտվում է սոցիալական աշխատանքի պրակտիկան՝ մոդելներն ու մոտեցումները, կառուցվածքային բաղադրիչները, աջակցության իրականացման եղանակները, մասնագիտական հմտությունները և այլն, սոցիալական աշխատանքի մասին առավելապես խոսվում է որպես **մասնագիտական գործունեություն**¹: Իսկ այն գիտական աշխատություններում, որոնցում հետազոտվում է սոցիալական աշխատանքի պրակտիկայի տեսական խնդրակարգը, բազմիցս խոսվում է որպես **արվեստ** նրա կարգավիճակի մասին², և արվեստ ասելիս, իհարկե, այս դեպքում հասկացվում է ոչ թե գեղարվեստական ստեղծագործություն, այլ **արվեստավոր գործունեություն**: Սոցիալական աշխատանքի վերաբերյալ

ժամանակակից գիտական գրականության մեջ արվեստի և մասնագիտական գործունեության հետ մեկտեղ այն բնորոշվում է նաև որպես գիտություն»:

Սոցիալական աշխատանքի մասնագիտական ընկերակցության շրջանակում ոչ բոլորն են հեշտությամբ համակերպվում այն մտքի հետ, որ սոցիալական աշխատանքը կարող է ներկայանալ նաև որպես գիտություն և հենց ուրույն գիտակարգ: Ջարմանալի է, բայց հիմնական պատճառներից մեկը վերաբերում է ոչ թե նրա բովանդակության մեջ օբյեկտայնություն, ուրույն մեթոդ, օրինաչափություններ, սկզբունքներ, կարգավորություն, համակարգվածություն չտեսնելուն և նրա գիտելիքի ճշմարիտ, հավաստի ու անսխալ լինելը, օբյեկտիվության, անհրաժեշտության ու հանրանշանակության չափանիշներին համապատասխանությունը սկզբունքորեն ժխտելու միտումին, այլ՝ ոչ քիչ չափով հոգեբանական է և վերաբերում է բուն անվանման ընկալմանը: «Սոցիալական աշխատանք» ֆենոմենն ու հասկացությունը իր գործնական բովանդակության և անվանումի մեջ ունենալով «աշխատանք» բաղադրատարրն ու կոնցեպտը, շփոթ ու անվստահություն է սերմանում մարդկանց մոտորումներում՝ ըմբռնել այն որպես ուրույն գիտություն և դասել սոցիալական գիտությունների շարքում: Ըստ իս, նման բնույթի զգացական ներագդեցություններից ու ասոցիացիաներից ձեռքագտավելու ու հետագայում նաև խուսափելու համար կարելի է առաջարկել մի նոր անվանում՝ այս անգամ արդեն իր բովանդակությանը իսկորեն համապատասխան: «Սոցիալական աշխատանք» անվանումն առաջացնում է հակվածություն և երբեմն նույնիսկ արմատավորում կաղապարվածություն՝ սոցիալական աշխատանքն ընկալել «աշխատանքի» այնպիսի տարատեսակների շարքում, որոնք սովորաբար հնարավոր է թվում և, կարծես, բնականոն՝ ըմբռնել սոսկ որպես մասնագիտական գործունեություն, օրինակ՝ հողագործություն, խոհարարություն, քարտաշություն, շինարարություն, ղեկավարություն..., և սկզբունքորեն չընդունել այն որպես գիտություն՝ նրա կայացման իրական ընթացքը հասկանալով ու իմաստավորելով որպես գիտակարգի պատմական կայացում: Այս առկաությամբ հարկ է ասել, որ

• տիեզերքի, աշխարհի, մարդկանց համատեղ կյանքի վերաբերյալ մարդկային գիտելիքի տարբեր տարատեսակներ կարող են ծավալվել,

մշակվել, զարգանալ ու համակարգվել այնչափ, որ ձեռք բերեն գիտության կարգավիճակ ու չլինեն սոսկ արվեստ կամ արվեստավոր գործունեություն՝ հատկապես հենց այն դեպքում, երբ որպես նպատակ են ունենում իսկության բացահայտումը և հանրանշանակ ու համակարգված գիտելիքների ձեռքբերումը,

- նկատի ունենալով սոցիալական աշխատանքի առարկայական տիրույթն ու կատարումը՝ տեսական ու գործնական, ժամանակակից բազմաբովանդակ իր կայացումը, գործառույթների ողջ համակարգը և ինքնահասկացման մակարդակը, անհրաժեշտություն է դարձել քննարկել նաև սոցիալական աշխատանք ֆենոմենի վերանվանման հարցը:

Սոցիալական աշխատանքի մասնագիտական գործառնության և ինքնաճանաչման կայացման պատմության մեջ նրա անվանման վերաբերյալ եղել են մի քանի մոտեցումներ: Այդպես Մեծ Բրիտանիայի մասնագետները դեռևս 19-րդ դարի վերջին այն անվանել են «սոցիալական բժշկություն», «սոցիալական մենեջերություն», Շվեդիայում և ապա՝ ռուսական մասնագիտական գրականության մեջ մենք հանդիպում ենք «սոցիոնոմիա» անվանմանը:

Մարդկային գործունեության բոլոր տեսակները՝ գիտություններն, արվեստներն ու արհեստները և այլն, որոնց գոյությունն արժևորվել ու ընդունելություն է գտել և, որպես մշակութորեն կամ սոցիալականորեն նշանակալի, իր ուրույն անվամբ՝ իր տեղն է գրավել հասարակության կյանքում, առհասարակ, իրենց անվամբ կոչվել են ըստ իրենց առարկայի կամ կատարումի հիմնորոշ ատրիբուցիայի: Այս նույն սկզբունքով կարելի է քննության առնել սոցիալական աշխատանքը և նախնականորեն բացորոշել նրա ուսումնասիրության առարկայի ու անելիք-կատարումի հիմնորոշ առանձնահատկությունները և ըստ այդմ՝ հասկանալ ու մեկնորոշել, թե՛ ադեկվատ է, արդյոք, սոցիալական այս իրողության անվանումը ժամանակակից իր գոյության որպիսությունն այլ գործունեությունների տեսակներից զատորոշող նրա բովանդակության հիմնորոշ ու հենց էական առանձնահատկություններին: Մինչ այժմ ասելով «սոցիալական աշխատանք»՝ այդկերպ անվանման մեջ նշվում էր միայն, որ դա աշխատանքային գործունեություն է և իրականանում է հենց սոցիալական ոլորտում:

Հարկ է սակայն, նկատի ունենալ, որ գոյություն ունեն միմյանցից զանազանվող բազում գործունեության տեսակներ, որոնք իրականանում են սոցիալական ոլորտում և կարող են կոչվել «սոցիալական» և նույնպես «աշխատանքային» գործունեություն են: Ընդ որում, բազում այդ գործունեության տեսակների մեջ կան այնպիսիները, որոնք նաև ուրույն գիտակարգեր են: սոցիալական աշխատանքը նախկինում հենց այդպես է անվանվել, քանզի նրա որպես այդպիսին կայացման սկզբնական շրջանում առաջնահերթ խնդիր էր դիտվում՝ կանխանշել և ինչ-որ չափով բացորոշել, թե որտեղ կարելի է տեղակայել այդ գործունեությունը՝ ինչ ոլորտի մեջ է այն իրագործվում ու ընդհանրական ինչպիսի՝ օբյեկտի է առնչում իրեն: Եվ որպես այդպիսի ոլորտ էր ճանաչվում սոցիալականը, իսկ ընդհանրական օբյեկտ՝ հասարակության մեջ ներգործուն միջամտության կարիք ունեցող անդամների՝ անհատների, խմբերի սոցիալական կյանքը: Նկողմի դրվածքն այնպիսին էր, որ նրանում առավելապես շեշտված էր դեռ միայն արտաքին ճանաչում գտնելու և հասարակության մեջ որպես առանձին, ուրույն մասնագիտական գործունեություն կայանալու հարցը:

Սոցիալական աշխատանքի այդպես անվամբ սկզբնագոյացման և որպես ուրույն մասնագիտական գործունեություն իր հասարակական ճանաչումը գտնելու այդ ժամանակաշրջանից էապես տարբեր է սոցիալական աշխատանքի գոյության ժամանակակից շրջանը: Սոցիալական աշխատանքի ժամանակակից գոյությունն այնպիսին է, որ նրանում առավելապես շեշտվածություն են ձեռք բերում արդեն ներքին հարցադրումները, և այն կայանում է որպես ինքն իրեն, իր գոյությունը, իսկությունն ու իմաստը հարցնող ու ինքնահասկացող ֆենոմեն և այդ իսկության ու իմաստի ձեռքբերմամբ՝ գիտություն: Բացորոշելով իր իսկությունն ու բովանդակությունը, այն հնարավորություն է ունենում ինքն իրեն անվանել այդ իսկության ու բովանդակության համապատասխան՝ ըստ իր իմաստի ու իմաստության:

Սոցիալական աշխատանքի տեսության ու պրակտիկայի քննարկմանը նվիրված և համահեղինակային աշխատակցությամբ հրատարակված իմ գիտական մենագրությունում արդեն առիթ եմ ունեցել ասելու, որ «սոցիալական աշխատանքն իր տեսական-ճանաչողական գործությամբ

(պոտենցիայով) իրագործվում է որպես կարիքի հասկացում ու բացահայտում և գործնական գործությամբ՝ իրագործվում որպես նպաստավոր աջակցություն, նույնն է թե ասել՝ **սատարում**։ Կարիքի բացահայտումն իր նպատակային կատարումին և հենց իմաստին (աջակցությանը, սատարմանը) հանգեցնող այս գործունեության անունով էլ կարելի է վերանվանել «սոցիալական աշխատանքը»⁵։ Այսպիսով, այն, ինչը նկատի է առնվում ասելով «սոցիալական աշխատանք», կարելի է անվանել «սատարագիտություն» և՛ որպես գիտակարգ, և՛ որպես ուսուցակարգ, և՛ որպես մասնագիտական գործունեություն։ ... Սոցիալական աշխատողին, ըստ իր գործունեության տեսական ու պրակտիկ բաղադրատարրերի երկմիասնության, հնարավորություն ենք ունենում անվանել արդեն «սատարագետ»⁶։

Սոցիալական աշխատանքի, որպես ուրույն գիտակարգ, որպիսության բացահայտմանն ուղղված խորհրդածությունների շրջանակում անհրաժեշտ է քննության առնել նաև սահմանման հարցը։ Մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք սոցիալական աշխատանքի որպես գիտության մի շարք սահմանումների։ Բ.Վ. Կուպրիյանովը տալիս է ռեսուրսային սահմանում. «Սոցիալական աշխատանքը, որպես գիտություն, կարելի է հասկանալ իբրև սոցիալական գործառնության խախտման իրավիճակում անհատի, ընտանիքի և համայնքի ներքին և արտաքին ռեսուրսների կառավարման գործընթացի օրինաչափությունների վերաբերյալ գիտական գիտելիքի ոլորտ»⁷։

Մեկ այլ սահմանման տարբերակ քննարկվում է Վոլգոգրադի համալսարանի մասնագիտական խմբի կողմից, ըստ որի՝ «սոցիալական աշխատանքը որպես հումանիտար գիտակարգ ուսումնասիրում է սոցիալական իրականությունը և սոցիալական հարաբերությունները յուրահատուկ կտրվածքով՝ ուղղված կարիքավորների նկատմամբ հոգացությանը, սոցիալական աջակցությանն ու օգնությանը, սոցիալական վերականգնմանն ու շտկմանը և այլն»⁸։

Հնդկաստանի Լաքնոու Համալսարանի Սոցիալական աշխատանքի դեպարտամենտի նախկին դեկավար դոկտոր, պրոֆեսոր Ռ. Բ. Ս. Վերման և Դելիի համալսարանի դոկտոր, ասիստենտ Ա. Պ. Մինկյար իրենց սոցիալական աշխատանքի ուղեցույցում տալիս են հետևյալ սահ-

մանումը՝ «Սոցիալական աշխատանքը պրակտիկ սոցիալական գիտություն է անհատական, խմբային և համայնքային մակարդակի սոցիալական խնդիրներին միջամտող, որի նպատակն է՝ սոցիալական փոփոխությունների, անհատների զարգացման, հզորացման, շահերի պաշտպանության և սոցիալական արդարության միջոցով հասնել արդյունավետ սոցիալական գործունեությանն ու ժողովրդի բարեկեցությանը, նվազեցնելով մարդկանց կախվածությունը»⁹:

Սոցիալական աշխատանքի, որպես գիտություն, գոյությունը ամրագրող մեկ այլ սահմանում ենք առաջարկում ևս մենք. *Սոցիալական աշխատանքը գիտություն է՝ անձանց, խմբերի տկարությունների ու կարիքների՝ իրենց որպիսության մեջ բացահայտության և մարդկային ինքնությամբ կենալու համար անհրաժեշտ և նախընտրելի, հոգևոր ու մարմնական կենսագործունեությանն ու պայմաններին, անմիջական հաղորդակցությամբ, աջակցության ըստ մարդկային կարողության*¹⁰:

Հարկավոր է փոքր-ինչ խորհրդածել այս սահմանման վերաբերյալ և մեկնաբանել այն: Սահմանման մեջ «գիտություն» բառով նշվում է սեռային հասկացությունը, իսկ մնացած բառերով՝ բաղկացուցիչ զանազանությունները, կամ ժամանակակից ձևական տրամաբանության լեզվով ասած՝ տարբերակիչ առանձնահատկությունները: Նախ՝ ինչո՞ւ է սոցիալական աշխատանքը գիտություն: Չէ՞ որ վերը արդեն խոսվել էր այն մասին որ սոցիալական աշխատանքը ոչ միայն գիտություն է, այլև գործունեություն և արդեն որպես գործունեություն կամ գործելակերպ, կախված աշխատողի անհատական կարողություններից՝ ընդունակություններից և հմտություններից, կարող է ըմբռնվել ևս որպես արվեստ: Ասենք, որ արվեստը նույնպես, ինչպես և գիտությունը, *ընդհանուր գիտելիք է*: Այն, իհարկե, նախ և առաջ անհատական փորձառություն է, բայց արդեն մշակված և վերլուծված այնքան, որ դարձել է այլ մարդկանց փոխանցելի ընդհանուր գիտելիք և այդ ընդհանուրի սահմաններում ևս ուսուցանելի: Այսպիսով, չկա՞ արդյոք այստեղ երկընտրանք. գիտություն կամ արվեստ: Եվ եթե չկա, արդյո՞ք սոցիալական աշխատանքը հնարավորություն ունի դիտվել ժամանակակից իմաստով և՛ որպես գիտություն, և՛ որպես արվեստ: Այսպես ձևակերպելը հնարավորություն է ընձեռում այն, որ կենսագործունեությունը իրենում ընդգրկում է և՛ հոգևոր, և՛ մարմնական

բաղադրիչներ, քանզի մարդ ասելով՝ արդեն իսկ նկատի է առնվում հոգու և մարմնի միասնությունը: Ավելի մանրամասն արտահայտվելու դեպքում կարող ենք ասել, որ **սոցիալական աշխատանքը ոչ միայն գիտություն է՝ հոգևոր-տեսական գործունեություն, այլև (ևույնպես հոգևոր, բայց և արվեստավոր պրակտիկ լինելով) հոգևոր-պրակտիկ գործունեություն**, և հենց այնպիսին, որ մարդկանց ու նաև նրանց կարիքավորության և նպաստավոր օգնության խնդիրներին առնչվող երբեմն անհատ անձանց, իսկ հիմնականում՝ պետական, հասարակական ինստիտուցիոնալ կառուցվածքային օղակների հետ աջակցության իրագործման դիտավորությամբ կազմակերպված **պրակտիկ հաղորդակցական գործունեություն է**: Այսպիսով, ինչո՞ւ է այն սահմանվում որպես գիտություն: **Սոցիալական աշխատանք ֆենոմենը երկմիասնություն է և ունի թե՛ տեսական, թե՛ գործնական բաղադրիչ**: Որպես տեսական՝ սոցիալական աշխատանքը դիտավորություն ունի բացահայտել **ճշմարտությունը**, ինչը և նա իրականացնում է՝ բացահայտելով մարդկանց տկարություններն ու կարիքներն իրենց որպիսությամբ: Իսկ որպես գործնական՝ այն առնչված է **բարուն** և դիտավորություն ունի **իրագործել բարին**՝ նպաստավոր աջակցությամբ խնամարար (հոգածուական) իր գործունեությամբ: Կարելի ամրագրել, որ «ամենայն մշակութային ժառանգություն, կնշանակի նաև՝ բուն գիտությունը, ...ձեռք է բերում իր իսկական գոյությունը և իր ճշմարիտ նշանակությունը միայն այն դեպքում, երբ ներկայանում է որպես ճշմարտության և բարու բացթողում»¹¹: Ընդ որում, և՛ որպես տեսական, և՛ որպես գործնական՝ սոցիալական աշխատանքը գիտություն է, այսինքն՝ գիտություն է իր տեսական ու գործնական երկմիասնությամբ: Սոցիալական աշխատանքը տեսական իր բաղադրիչում ճանաչելով բարին, ամեննին էլ չի կորցնում իր գիտական կարգավիճակը, երբ արդեն որպես գործունեություն՝ գործում է բարին: Այսպիսով, **որպես գիտություն՝ սոցիալական աշխատանքը բացահայտում է ճշմարտությունը, իսկ որպես գործունեություն՝ գիտությամբ իրագործում բարին**:

ՀՆԱԽՆԵՐ

1. Sl'u Morales A. T. & Sheafor B. W., Social work. A profession of many faces, Boston, 1992. Healy I. M., International social work, NY, 2001, Compton R. B., Galaway B., Social work processes, Belmont, 1989 և այլն:
2. Sl'u Nichols M. P. & Schwartz R. C., Family Therapy Concepts and Methods, Boston, 1995. England Hugh, Social Work as Art. Making sense for Good Practice, London, 1986 և այլն:
3. Sl'u Bisman C., Social work practice. Cases and principles, California, 1994, էջ 2. Теория социальной работы, под ред. Холостовой Е. И., М., 1998, էջ 43-86, Основы социальной работы. под ред. Павленок П. Д., М., 2004, էջ 6-10, և այլն:
4. Sl'u Социальная работа введение в профессиональную деятельность, Уч. пос. под ред. Козлова А.А., М., 2005, էջ 43, ինչպես նաև Социальная работа, под ред. Курбатова В.И., Ростов на Дону, 2000, էջ 72-73:
5. Ջիջյան Ա., Քոչարյան Ռ., Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և «քրիստոնեական կենսակերպի արմատավորումը», «ԴԱԼԼ», Եր., 2009, էջ 76-77:
6. Նույն տեղում, էջ 95:
7. http://ru.wikipedia.org/wiki/социальная_работа 30.07.13
8. Sl'u Теория социальной работы: Учебно-методическое пособие: В 3 ч., часть 1 / Выршиков А.Н., Кузнецова М.А., Новак Е.С., Чернов А.Ю. — Волгоград: Издательство ВолГУ, 1999, էջ 9:
9. Sl'u Verma, R.B.S. and Singh, Atul Pratap. (2011). Handbook of Field Work Practice Learning in Social Work. Lucknow, U.P. (India): New Royal Book Company. p. 1:
10. Ջիջյան Ա., Քոչարյան Ռ., Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և «քրիստոնեական կենսակերպի արմատավորումը», «ԴԱԼԼ», Եր., 2009, էջ 167:
11. Джиджон А. Социальный конфликт и общая теория его регулирования, Е., 2009, с.16-17.